# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 0407-Ա

### ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով գույքի սեփականատերեր՝ Վարդուշ Արարատի Շուշանյանի (ծնված՝ 26.09.1967թ.), Ալինա Գրիգորի Լևինայի (ծնված՝ 28.10.1985թ.), Արծրուն Գրիգորի Ոսկանյանի (ծնված՝ 07.10.1986թ.) դիմումը՝ հողամասից հրաժարվելու մասին և սեփականության իրավունքի վկայականները՝ 10072024-06-0049,10072024-06-0092. որոշում եմ

1 . Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող , Վարդուշ Արարատի Շուշանյանին (ծնված՝ 26.09.1967թ.), Ալինա Գրիգորի Լևինային (ծնված՝ 28.10.1985թ.), Արծրուն Գրիգորի Ոսկանյանին (ծնված՝ 07.10.1986թ.) սեփականության իրավունքով պատկանող ըստ կադաստրային քարտեզի.
1) 06-041-0233-0016 ծածկագրում գտնվող 0.3868 հա գյուղատնտեսական խոտհարքը
2) 06-041-0238-0017 ծածկագրում գտնվող 0.8504 հա գյուղատնտեսական խոտհարքը
համարել համայնքային սեփականություն:

2. Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Էդմոն Բաղդասարյանին՝ դիմել ՀՀ Կադաստրի Կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում, վերոնշյալ բնակիչների սեփականության իրավունքը դադարեցնելու և համայնքային սեփականության իրավունքը գրանցելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

02 ապրիլի 2025
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 0406-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ, ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 1532-Ն որոշումները.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Ռազմական դրության ժամանակ և խաղաղ պայմաններում համայնքի բնակչության և քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) ուղղված աշխատանքների պլանավորման և կազմակերպման, խոցման օջախներում վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար համայնքապետարանի և կազմակերպությունների հիման վրա ստեղծել՝

1) ՔՊ շտաբ և ՔՊ ծառայություններ՝ համաձայն հավելված 1-ի.

2) Տարահանման հանձնաժողով՝ համաձայն հավելված 2-ի.

3) ՔՊ կազմավորումներ՝ համաձայն հավելված 3-ի:

2. ՔՊ ծառայությունների ղեկավարներին՝ մինչև 10.04.2025թ. մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ծառայությունների կանոնադրությունները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

4. Որոշումը հայտարարել ըստ առնչության:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

02 ապրիլի 2025
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 0405-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ որոշում եմ

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-010-0002-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Ազնվաձոր, 4-րդ փողոց, 31 բնակելի տուն փոստային հասցե:

2.06-010-0004-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Ազնվաձոր, 4-րդ փողոց, 24/2 հողամաս փոստային հասցե:

3.Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

02 ապրիլի 2025
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 0404-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի «ՔՊ պլանների մշակման կարգը սահմանելու մասին» թիվ 633-Ն որոշման 1-ին գլխի 2-րդ կետը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել՝ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի քաղաքացիական պաշտպանությա ն պլանը, համաձայն հավելվածի.

1) հիմնական ցուցանիշները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) պլանը՝ Փամբակ համայնքի տարածքում հնարավոր իրավիճակի և բացատրագիր, համաձայն N 2 հավելվածի.

3) տվյալները՝ Փամբակի համայնքի տարածքի քիմիապես վտանգավոր օբյեկտների վերաբերյալ, համաձայն N 3 հավելվածի.

4) կառավարման, կապի և ազդարարման սխեման՝ համաձայն N 4 հավելվածի.

5) ցանկը՝ «Բարձր» և «Լրիվ» պատրաստականության աշխատակարգի միջոցառումների, համաձայն N 5 հավելվածի.

6) պլանը՝ Փամբակ համայնքի քաղաքացիական պաշտպանության հետախուզության և բացատրագիր, համաձայն N 6 հավելվածի.

7) հաշվարկը՝ Փամբակ համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման, համաձայն N 7 հավելվածի.

8) հաշվարկը՝ Փամբակ համայնքի բնակչության պատսպարման, համաձայն N 8 հավելվածի.

9) հաշվարկը՝ Փամբակ համայնքի բնակչության պատսպարման, համաձայն N 9 հավելվածի.

10) հաշվարկը՝ Փամբակ համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների, համաձայն N 10 հավելվածի.

11) հաշվարկը՝ կապի միջոցների, համաձայն N 11 հավելվածի.

12) հաշվարկը՝ ինժեներական տեխնիկայի ապահովման, համաձայն N 12 հավելվածի:

2. Սույն որոշմանի 1-ին կետով հավելվածները հաստատվում են երեք տարի ժամկետով:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

4. Որոշումը հայտարարել ըստ առնչության:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

02 ապրիլի 2025
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 0403-Ա

**ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ, 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ 43-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Ռուբեն Արտավազդի Հովսեփյանի (ծնված՝ 15.02.1959թ.) դիմումը, «Տարոն Վարդանյան Արտուրի» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը և 20248PBA8E (24.12.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը, Դեբետ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 20.04.1991թ. N-1 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ՝ որոշում եմ

1.Հաստատել Փամբակ համյանքի Դեբեդ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-034-0035-0006 կադաստրային ծածկագրով 0,20537 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա գտնվող շինությունների հատակագիծը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Ռուբեն Արտավազդի Հովսեփյանի (ծնված 15.02.1959թ.), Աղունիկ Վեկտորի Հովսեփյանի (ծնված 05.03.1960թ.), Կամսար Ռուբենի Հովսեփյանի (ծնված 15.12.1981թ.), Արեն Ռուբենի Հովսեփյանի (ծնված 20.06.1985թ.) և Անի Ռուբենի Հովսեփյանի (ծնված 07.08.1989թ.) սեփականության իրավունքը 06-034-0035-0006 կադաստրային ծածկագրով 0,20537 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա գտնվող 218,9 ք/մ ներքին մակերեսով շենք շինությունների նկատմամբ:

3. 06-034-0035-0006 կադաստրային ծածկագրով 0,20537 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում առկա է 14.3 ք/մ մակերեսով 2001թ-ից հետո ինքնակամ կառուցված անասնաշենք, որի օրինականացումը կկատարվի օրենքով սահմանված կարգով:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

02 ապրիլի 2025, գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2025թվականի N 0402-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ որոշում եմ

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-034-0035-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ, 4-րդ փողոց, 10 բնակելի տուն փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

02 ապրիլի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0401-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԵՔԻԱԹ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին» Հայաստանի Հանարպետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N 02-Ն հրամանով հաստատված կարգի 1-ին կետը՝ որոշում եմ.

1. 2025 թվականի մայիսի 02-ին՝ ժամը 11:00-ին անցկացնել մրցույթ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի «Եղեգնուտի Հեքիաթ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

2. Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել լիազոր մարմնին և Լոռու մարզպետի աշխատակազմին, ինչպես նաև տեղադրել Փամբակի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

31 մարտի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0400-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱԼՎԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա. ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 143-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սալվինա Հարությունյանի 2025 թվականի մարտի 27-ի հայտը՝ որոշում եմ

1. Անհատ ձեռնարկատեր /ՀՎՀՀ 66981361/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի 4 փ, 1 նրբ, 31., հասցեում (36 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2025 թվականի 2-րդ եռամսյակի (01.04.2025թ-30.06.2025թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

31 մարտի 2025
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0399-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱԼՎԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի ա. ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 143-Ն որոշման հավելվածի 12-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սալվինա Հարությունյանի 2025 թվականի մարտի 27-ի հայտը՝ որոշում եմ.

1. Անհատ ձեռնարկատեր Սալվինա Հարությունյանի /ՀՎՀՀ 66981361/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի 4 փ, 1 նրբ, 31., հասցեում (36 քմ մակերեսով հիմնական շինությունում) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2-րդ եռամսյակի (01.04.2025թ-30.06.2025թ) համար:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

31 մարտի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0398-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԴԱՎԻԹ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա. և բ. ենթակետերով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 143-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի ա. ենթակետի և 2-րդ կետի ա. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Դավիթ Կոստանդյանի 2025 թվականի մարտի 25-ի հայտը՝ որոշում եմ

1. Անհատ ձեռնարկատեր Դավիթ Կոստանդյանի /ՀՎՀՀ 67110964/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Եղեգնուտ բնակավայրի 1 փողոց, 4 նրբ.,11 տուն հասցեում (24 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2025 թվականի 2-րդ եռամսյակի (01.04.2025թ-30.06.2025թ) համար:

2.Աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

31 մարտի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0397-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՀԱԳՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա. ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 143-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի դ. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վահագն Աղաջանյանի 2025 թվականի մարտի 26-ի հայտը՝ որոշում եմ

1.Անհատ ձեռնարկատեր Վահագն Աղաջանյանի /ՀՎՀՀ 66893288/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի Վահագնի-Ալավերդի խճուղի 11 սպասարկման օբյեկտ հասցեում (150 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2025 թվականի 2-րդ եռամսյակի (01.04.2025թ-30.06.2025թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

31 մարտի 2025
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0396-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՀԱԳՆ ԱՂՋԱՆՅԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի ա. ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 145-Ն որոշման հավելվածի 12-րդ մասի 1-ին կետի դ. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վահագն Աղաջանյանի 2025 թվականի մարտի 26-ի հայտը՝ որոշում եմ

1.Անհատ ձեռնարկատեր Վահագն Աղաջանյանի /ՀՎՀՀ 66893288/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Վահագնի բնակավայրի Վանաձոր-Ալավերդի խճուղի 11 սպասարկման օբյեկտ հասցեում (150 քմ մակերեսով հիմնական շինությունում) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2025 թվականի 2-րդ եռամսյակի (01.04.2025թ-30.06.2025թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

31 մարտի 2025
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0395-Ա

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, Տեղականտուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դ. ենթակատի, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 143-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 13-րդ մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ>> ԲՀ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանի 2025 թվականի  մարտի 26-ի հայտը.որոշում եմ

1.<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ>> ԲՀ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանի /ՀՎՀՀ 02569972/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնք, գ.Վահագնի,  Ալավերդի մայրուղի 24-26կմ, 2-րդ շինություն հասցեում (10 քմ մակերեսով) այլ արտաքին գովազդի թույլտվություն՝ 2025 թվականի ( 01.03.2025թ-31.12.2025թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

31 մարտի 2025
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0394-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՈՒՍԻՆԵ ՄԻՐԱՔՅԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի ա. ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 143-Ն որոշման հավելվածի 12-րդ մասի 1-ին կետի ա. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լուսինե Միրաքյանի 2025 թվականի մարտի 24-ի հայտը՝ որոշում եմ

1.Անհատ ձեռնարկատեր Լուսինե Միրաքյանի /ՀՎՀՀ 75485791/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի Վանաձոր-Սպիտակ մայրուղի հասցեում (25 քմ մակերեսով հիմնական շինությունում) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2025 թվականի 2-րդ եռամսյակի (01.04.2025թ-30.06.2025թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

31 մարտի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0393-Ա

### ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13.01.2025 ԹՎԱԿԱՆԻ N 0064-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ**

ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավարի 13.01.2025 թվականի «Անհատ ձեռնարկատեր Արմեն Կոստանդյանին ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն տալու մասին» N 0064-Ա որոշման վերնագրի մեջ կատարել փոփոխություն՝ «Արմեն»-ի փոխարեն կարդալ «Դավիթ»:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

31 մարտի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0392-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ որոշում եմ

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-070-0048-0065 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 4-րդ փողոց, 1-ին փակուղի, 6 բնակելի տուն փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

31 մարտի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0391-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ որոշում եմ

1.Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-070-0048-0027 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Մարգահովիտ, 1-ին փողոց, 156/1 հողամաս փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

31 մարտի 2025
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0390-Ա

### ՆԱԽԿԻՆ ԼԵՌԱՊԱՏ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 0008-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով, ՀՀԿԿ-ի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 14/02/2025 թվականի N Կ-14022025-06-0191 կասեցման որոշումը՝ **որոշում եմ**

1. Համայնքի ղեկավարի 08 հունվարի 2025 թվականի N 0008-Ա որոշման 2-րդ կետի «շինությունները» բառից հետո ավելացնել հետևյալ բովանդակությունը «և ներքին ձևափոխությունների արդյունքում առաջացած թվով 6 պատուհանը և 5 դուռը»:

2. Համայնքի ղեկավարի 08 հունվարի 2025 թվականի N 0008-Ա որոշման 3-րդ կետի «32075 ՀՀ դրամ» բառակապակցությունից հետո ավելացնել հետևյալ բովանդակությունը «և ներքին ձևափոխությունների արդյունքում առաջացած թվով 6 պատուհան և 5 դռան օրինականացման վճարը 11308 ՀՀ դրամ»:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

31 մարտի 2025
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՐՏԻ 2025թվականի N 0389-Ա

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումը, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգը, քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Ժորա Սուրենի Չոբանյանի (ծնված՝ 19/09/1961թ.) դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը և 2024VTNZV5 (15.10.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը՝   որոշում եմ

1.Ժորա Սուրենի Չոբանյանին (ծնված՝ 19/09/1961թ.), Արմենուհի Սուրիկի Վարդևանյանին (ծնված 09/01/1963թ.), Քրիստինե Ժորայի Չոբանյանին (ծնված09/01/1984թ.) և Էդգար Ժորայի Չոբանյանին (ծնված 22/02/1985) սեփականության իրավունքով պատկանող 06-070-0090-0001 կադաստրային ծածկագրով 0,01295 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2.Հաստատել 06-070-0090-0001 կադաստրային ծածկագրով 0,01295 հա կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապտման գործատնական նշանակության հողամասի և հողամասի վրա առկա շինությունների հատակագիծը համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:

3.Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնք, գյուղ Մարիահովիտ, 4-րդ փողոց 18 բնակելի տուն հասցեում գտնվող Ժորա Սուրենի Չոբանյանին (ծնված՝ 19/09/1961թ.), Արմենուհի Սուրիկի Վարդևանյանին (ծնված 09/01/1963թ.), Քրիստինե Ժորայի Չոբանյանին (ծնված 09/01/1984թ.) և Էդգար Ժորայի Չոբանյանին (ծնված 22/02/1985թ.) սեփականության իրավունքով պատկանող միավորված 06-070-0090-0001 կադաստրային ծածկագրով 0,01295 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապտման գործատնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող 2003 թվականին կառուցված ընդհանուր 57,2 ք/մ արտաքին մակերեսով թիվ 1 բնակելի տունը, 2003թ-ին կառուցված 7,5 ք/մ արտաքին մակերեսով թիվ 2 մառանը, 2019թ-ին կառուցված 2,9 ք/մ մակերսով թիվ 3 պարիսպը և 2003թ-ին կառուցված 0,6 ք/մ մակերեսով թիվ 4 պարիսպը:

4.Պարտավորեցնել Ժորա Սուրենի Չոբանյանին, Արմենուհի Սուրիկի Վարդևանյանին, Քրիստինե Ժորայի Չոբանյանին և Էդգար Ժորայի Չոբանյանին վճարել 57,2 ք/մ արտաքին չափերով բնակելի տան օրինականացման վճարը՝ 58802 ՀՀ դրամ և 11 ք/մ ընդհանուր 11 ք/մ արտաքին մակերեսով օժանդակ շինությունների օրինականացմման վճարը՝ 6785 ՀՀ դրամ: Ընդհանուր՝ 65587 ՀՀ դրամ:

5.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի միասնական ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

31 մարտի 2025
գ. Փամբակ